ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ Ու Մ

«26» մարտի 2018 թվականի N 24

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 26-ի թիվ 4 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

| | ԿՈՂՄ (8) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | ------------- | ------------- | ------------- |
| ՍԵՐԳՈ ՍԱՄՎԵԼՅԱՆ | ------------- | ------------- | ------------- |
| ԱՐԱ ՌՈՍՏՈՄՅԱՆ | ------------- | ------------- | ------------- |
| ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | ------------- | ------------- | ------------- |
| ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱԶՅԱՆ | ------------- | ------------- | ------------- |
| ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ | ------------- | ------------- | ------------- |
| ՄԻՇԱ ԱՎԱԳՅԱՆ | ------------- | ------------- | ------------- |
| ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱԲԵԿՅԱՆ | ------------- | ------------- | ------------- |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 26-Ի N 24 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու
2018 թվականի մարտի 26-ի թիվ 4 նիստի

1. ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N15 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 72-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Աշխատակազմի քարտուղար Գ. Սայադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«26» մարտի 2018 թվականի N 25

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N 15 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետով, հաշվի առնելով ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարանի կողմից 15.03.2018թ. անցկացված ՄՀՄՏԳԱՄՀՄԱ-ԱՇՁԲ 18/2 մեկանձյա հրատապ գնման արդյունքները և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 19-ի «Գումար տրամադրելու մասին» N15 որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

   «1. ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի «Մովսես Տեր-Գալուստյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի վերանորոգման նպատակով նախագծահետազոտական աշխատանքների կատարման համար տրամադրել 70 000 /յոթանասուն հազար/ դրամ:

2. ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի «Մովսես Տեր-Գալուստյանի անվան մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքների կատարման համար տրամադրել 3 600 000 դրամ /երեք միլիոն վեց հարյուր հազար/»:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | ԿՈՂՄ (8) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | ---------------- | ---------------- | ---------------- |
| ՍԵՐԳՈ ՍԱՄՎԵԼՅԱՆ | ---------------- | ---------------- | ---------------- |
| ԱՐԱ ՌՈՍՏՈՄՅԱՆ | ---------------- | ---------------- | ---------------- |
| ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | ---------------- | ---------------- | ---------------- |
| ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱԶՅԱՆ | ---------------- | ---------------- | ---------------- |
| ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ | ---------------- | ---------------- | ---------------- |
| ՄԻՇԱ ԱՎԱԳՅԱՆ | ---------------- | ---------------- | ---------------- |
| ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱԲԵԿՅԱՆ | ---------------- | ---------------- | ---------------- |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«26» մարտի 2018 թվականի N 26

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, հաշվի առնելով սոցիալական օգնությունների տրամադրման հանձնաժողովի թիվ 4 եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Բուժման նպատակով դրամական օգնություն տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի թվով 1 բնակչի՝ համաձայն հավելվածի:
2. Դրամական օգնություն տրամադրել ուժգին քամու հետևանքով տուժած Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի թվով 2 բնակչի՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | ԿՈՂՄ (8) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| ՍԵՐԳՈ ՍԱՄՎԵԼՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| ԱՐԱ ՌՈՍՏՈՄՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱԶՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| ՄԻՇԱ ԱՎԱԳՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |
| ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱԲԵԿՅԱՆ | ------------ | ------------ | ------------ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 26-Ի N26 ՈՐՈՇՄԱՆ

## ՑՈՒՑԱԿ
## ԲՈՒԺՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ

| Հ/Հ | Գումար ստացողի ազգանուն, անուն, հայրանունը | Գումարի չափը |
|---|---|---|
| 1 | Բարեղամյան Աստղիկ Հարությունի | 15 000 |

## ՑՈՒՑԱԿ
## ՈՒԺԳԻՆ ՔԱՄՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՏՈՒԺԱԾ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

| Հ/Հ | Գումար ստացողի ազգանուն, անուն, հայրանունը | Գումարի չափը |
|---|---|---|
| 1 | Մարտիրոսյան Շահեն Մեհրաբի | 20 000 |
| 2 | Պողոսյան Քրիստինե Խոնհարի | 25 000 |

Աշխատակազմի քարտուղար Գ. Սայադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռի գյուղական համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«26» մարտի 2018 թվականի N 27

## ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով, և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի Զ. Անդրանիկ և Պ. Սևակ փողոցներով անցնող սելավատարի կամրջի վերանորոգման աշխատանքների կատարման համար տրամադրել 200 000 /երկու հարյուր հազար/ դրամ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| | ԿՈՂՄ (8) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| ՍԵՐԳՈ ՍԱՄՎԵԼՅԱՆ | | | |
| ԱՐԱ ՌՈՍՏՈՄՅԱՆ | | | |
| ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | | | |
| ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱԶՅԱՆ | | | |
| ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ | | | |
| ՄԻՇԱ ԱՎԱԳՅԱՆ | | | |
| ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱԲԵԿՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
# ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մուսալեռ համայնք, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1
Էլ.փոստ mailto:musaler.armavir@mta.gov.am
Հեռ. 0231 6-47-22

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«26» մարտի 2018 թվականի N28-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 72-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 20.03.2018թ. N01/16.2/1634-18 հանձնարարականը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 72-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
   2) Որոշմամբ հաստատված «Համայնքի բյուջեի եկամուտների» տող 1111 /գույքահարկ համայնքների վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների համար/ ավելացնել 238.0.0 դրամ:
   3) «Համայնքի բյուջեի եկամուտների» տող 1112 / հողի հարկ համայնքների վարչական տարածքում գտնվող հողերի համար/ ավելացնել 420.0 հազար դրամ:
   4) «Համայնքի բյուջեի եկամուտների» տող 1121 /գույքահարկ փոխադրամիջոցների համար/ ավելացնել 560.0 հազար դրամ:
   5) Վարչական բյուջեի 10 բաժին 7 խումբ 1 դաս հոդված 4729 /այլ նպաստներ բյուջեից/ ավելացնել 1100.0 հազար դրամ:

6) Վարչական բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 4269 /հատուկ նպատակային այլ նյութեր/ ավելացնել 100.0 հազար դրամ:

7) Վարչական բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված 4819 /նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին/ ավելացնել 18.0 հազար դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| | ԿՈՂՄ (8) | ԴԵՄ (0) | ՁԵՌՆՊԱՀ (0) |
|---|---|---|---|
| ԱԼԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ | | | |
| ՍԵՐԳՈ ՍԱՄՎԵԼՅԱՆ | | | |
| ԱՐԱ ՌՈՍՏՈՄՅԱՆ | | | |
| ՎԱՀԱԳՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | | | |
| ՌՈԲԵՐՏ ԹԱՄԱԶՅԱՆ | | | |
| ՆՈՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ | | | |
| ՄԻՇԱ ԱՎԱԳՅԱՆ | | | |
| ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱԲԵԿՅԱՆ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ